Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2025 թ. փետրվարի 27-ի N 13-Լ հրամանի

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ԶԵՎԱՉԱՓ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՄԲ ԶԵՎԱՎՈՐՎԱԾ ԵՎ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի

Մասնակցային բյուջետավորմամբ իրականացված և սուբվենցիա ստացած ծրագրի անվանումը

Աշտարակ համայնքի Գիտավան ՌՖԷԻ թաղամասում, Արտաշավան և Ոսկեվազ բնակավայրերում ֆուտբոլի խաղադաշտերի կառուցման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում

1.Ծրագրի իրավական հիմքերը 2025թ. հունվարի 15-ի համայնքի ավագանու N 3-Ա որոշում, ՀՀ կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1313 - Ն որոշում

(Նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ կառավարության համապատասխան որոշման ամսաթիվը և համարը)

2.Առաջարկ-նախագծի (որի հիման վրա մշակվել է մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծագիրը) հեղինակի անվանումը, Խմբային առաջարկը ներկայացվել է Հայկ Հարությունյանի /Աշտարակ/, Աղաբեկ Ապանյանի /Արտաշավան/ և Արամայիս Նիկողոսյանի /Ոսկեվազ/ կողմից:

(Նշել՝ բնակչի դեպքում անուն, հայրանուն, ազգանուն, անձը հաստատող փաստաթղթի համարը, իսկ հասարակական միավորման դեպքում անվանումը և պետական գրանցման համարը)

3.Առաջարկ-նախագծի օգտին քվեարկության արդյունքները և մասնակցային բյուջետավորման գործընթացը կառավարող հանձնաժողովի կազմած արձանագրության համարը
https://ashtarak.am/upload/DocFlow/UpLoader/Th2532017494011797_Ashtarak38.pdf
Քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը -63846
Քվեարկածների թվաքանակը-1144
Մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակի մեջ-1,8 %-ը

(Քվեարկության արդյունքների վերաբերյալ համայնքի պաշտոնական կայքի համապատասխան տեղեկատվությանը հղումը, նշել քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակը և առաջարկ-նախագծի օգտին քվեարկածների թվաքանակը և %-ը մասնակցելու իրավունք ունեցողների ընդհանուր թվաքանակի մեջ)

4. Համայնքի/բնակավայրի բնակչության թվաքանակը, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը

Համայնք՝ 80135 բնակիչ,
Բնակավայր՝ բ.Աշտարակ, գ.Արտաշավան, գ.Ոսկեվազ 31893 բնակիչ,
Քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը -25410

(Նշել համայնք՝ .... բնակիչ, ծրագիրն ընդգրկող բնակավայր՝ ... բնակիչ, քվեարկության իրավունք ունեցողների թվաքանակը)

5. Ծրագրի սկիզբը և ավարտը 15.09.2025-20.12.2025թթ.

6. Ծրագրի նախագծային արժեքը ՝ 185 400,0 *հազ. դրամ* (100%)

7.Ծրագրի նպատակը

(Ներկայացնել երկարաժամկետ կտրվածքով ընդհանուր նպատակը, որին հասնելուն միտված է տվյալ ծրագիրը)

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը Ծրագրի հիմնական նպատակն է՝ նպաստել Աշտարակ համայնքի Գիտավան ՌՖԷԻ թաղամասում, Արտաշավան և Ոսկեվազ բնակավայրերի բնակչությանը մատուցվող ծառայությունների պայմանների և որակի բարելավմանը:

Երեխաների և երիտասարդների մարզական միջոցառումների կազմակերպման համար համայնքում անհրաժեշտ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով իրականացվում են նոր և գոյություն ունեցող մարզադաշտերի ստեղծման, տարածքների բարեկարգման, հիմնանորոգման ու պահպանման աշխատանքներ:

Ծրագրով առաջարկվում է Գիտավան ՌՖԷԻ թաղամասում, Արտաշավան և Ոսկեվազ բնակավայրերում ֆուտբոլի խաղադաշտերի կառուցման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացումը՝

մասնավորապես տարածքներն առանձնացնել ցանկապատով, համապատասխան վայրերում կատարել կանաչապատման և ասֆալտապատման աշխատանքներ, դրանք առանձնացնելով բազալտե եզրաքարերով:

Ծրագրի իրականացումը շատ կարևոր է համայնքի զարգացման համար, Աշտարակ քաղաքի, Արտաշավան և Ոսկեվազ բնակավայրերի բնակիչները բազմիցս են բարձրացնում վերոնշված խնդիրը, հաշվի առնելով պահանջարկի մեծացումը, շատ նպատակահարմար է համայնքում ունենալ բարեկարգված ֆուտբոլի խաղադաշտեր:

(Մանրամասն նկարագրել, թե համայնքային նշանակության ինչ խնդիրներ է լուծվել)

9.Ծրագրով հաստատված վերջնական ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման արդյունքում բնակավայրերի բնակիչների համար ազատ ժամանցի կազմակերպման հնարավորություն կլինի, ֆուտբոլի զարգացման ու սպորտի մասսայականացման, ինչպես նաև երիտասարդության ազատ ժամանակն առողջ ապրելակերպին հատկացնելու համար:

Ծրագրից կօգտվեն՝ Աշտարակ համայնքի Գիտավան ՌՖԷԻ թաղամասի, Արտաշավան և Ոսկեվազ բնակավայրերի բնակչությունը:

(Նշել՝ կոնկրետ, չափելի և իրատեսական ցուցիչներ)

10. Ծրագրի իրականացման փաստացի արժեքը 185 400,0 *հազ. դրամ* (100%)

Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմել է՝ 112 648,8 *հազ. դրամ* (61%)

ՀՀ պետական բյուջեից տրամադրվող չափաբաժինը կազմել է՝ 72 751,2 *հազ. դրամ* (39%)

11. Ծրագրի փաստացի շահառուները՝ բ.Աշտարակ, գ.Արտաշավան, գ.Ոսկեվազ ընդհանուր 6055 երեխա :

(Նկարագրել փաստացի շահառուների խումբը և քանակը)

- **12. Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները**
- Աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստում, փորձաքննության անցկացում:

• Աշխատանքների կատարման մրցույթի հայտարարում, կապալառուի ընտրում: Ժամկետը՝ ըստ ՀՀ գնումների մասին անցկացվող ընթացակարգի:

• Հաղթող կապալառուի հետ պայմանագրի կնքում

• Շինթույլտվության տրամադրում

• Աշխատանքների կատարման հատվածում նախապատրաստական աշխատանքների իրականացում

• Կապիտալ վերանորոգման և շինարարական աշխատանքների իրականացում, զուգահեռ աշխատանքների կատարման տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացում և ավարտական ակտի ընդունում:

(Նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների նկարագրությամբ)

13. Ծրագիրն իրականացնողները և աջակցողները

Ծրագիրը իրականացվել է մասնակցային բյուջետային գործընթացի շրջանակներում, համայնքի համաֆինանսավորմամբ:

(Թվարկել ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, իրավաբանական անձ, ծրագրի իրականացման նպատակով հավելյալ ֆինանսական միջոցներ տրամադրող անձ և այլն) անվանումները

14.Ծրագրի փաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը

Ծրագիրը համապատասխանում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությանը: Համայնքի 5-ամյա զարգացման ծրագրում և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանում՝ հաշվի առնելով համայնքային մի շարք առաջնահերթություններ և զարգացման ուղղությունները, համայնքի հասարակական նշանակության տարածքների հիմնանորոգումը և բարեգարգումը իր բաղադրիչներով, ունեն իրենց հստակ տեղը:

Ծրագրի իրականացման արդյունքում սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքում ակնկալվում է՝ համայնքը կունենա բնակչության կյանքի որակի բարելավում,բնակավայրերի բնակիչների համար ազատ ժամանցի կազմակերպման հնարավորություն, ֆուտբոլի զարգացման ու սպորտի մասսայականացման, ինչպես նաև երիտասարդության ազատ ժամանակն առողջ ապրելակերպին հատկացնելու համար:

(Նշել ծրագրի համապատասխանելիությունը ՀՀ կառավարության ծրագրով և համայնքի զարգացման ծրագրային և ռազմավարական նշանակության փաստաթղթերով սահմանված նպատակների հետ:
Ներկայացնել ծրագրի ավարտից հետո միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները: Հիմնավորել՝ ցույց տալով կապը ծրագրի շրջանակներում լուծվող խնդիրների և իրականացվող գործունեության արդյունքների հետ: Սպասվող արդյունքների նկարագրությունը պետք է լինի հնարավորինս կոնկրետ, իրատեսական, գնահատելի և չափելի:)

15. Հաշվետվության հրապարակումը 27.02.2026թ.

https://ashtarak.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&tv=-4&g=a8948c96-14bf-4d72-967c-0890bd28df28

(Նշել համայնքի պաշտոնական կայքէջում տեղադրման ամսաթիվը և հղումները)

Աշտարակ
համայնքի ղեկավար

Թովմաս Շահվերդյան
(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)